«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ամսաթիվ՝	**04.09.2026թ.**
Ֆուտբոլային ակումբ՝	**«Անդրանիկ ՖԱ» ՀԿ**
Առաջնություն՝	**ՀԳԽ (2026-2027)**
Խաղ՝	**«Անդրանիկ» - «Էջմիածին ՍԱ», 25.08.2026թ.**
Վարույթ՝	**ՀԳԽ-002**

Հարգելի՛ գործընկեր,

Կից ներկայացված է ՀԳԽ-002 վարույթի շուրջ ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի կողմից 2026 թվականի սեպտեմբերի 03-ին տեղի ունեցած նիստի արդյունքում կայացված որոշումը։

Խնդրում ենք որոշումն ընդունել ի գիտություն եւ ապահովել վերջինիս կատարումը՝ ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կանոնակարգով (2026թ. խմբագրություն) սահմանված կարգով։

Հարգանքով՝

ՀՖՖ Կարգապահական գրասենյակ

Գրասենյակի ղեկավար՝ Գայանե Զաքարյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝

«Անդրանիկ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ fcandranik@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03.09.2026թ.

Զեկուցող (անդամ)	Դավիթ Բակլաչյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան
	Նազելի Արսենյան

Վարույթ՝	ՀԳԽ-002
Խախտում՝	«Անդրանիկ» թիմի ֆուտբոլիստ Ռուբեն Եսայանի (19569) գնդակի համար պայքարում շատ կոպիտ խախտում կատարելը / Հավելված 1 Բ, 14-րդ կետ
Առաջնություն՝	ՀԳԽ (2026-2027)
Խաղ՝	«Անդրանիկ» - «Էջմիածին ՍԱ », 25.08.2026թ.

ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեն որոշեց՝

«Անդրանիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով։

Հիմք ընդունելով Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2026 թվականի խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Անդրանիկ» թիմի ֆուտբոլիստ Ռուբեն Եսայանին (19569) որակազրկել 2 (երկու) խաղով։ Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 1 (մեկ) խաղը, պայմանականորեն չկիրառել։ «Անդրանիկ» թիմի ֆուտբոլիստ Ռուբեն Եսայանի (19569) նկատմամբ փորձաշրջան սահմանել 2 (երկու) ամիս ժամկետով՝ մինչև 2026 թվականի հոկտեմբերի 25-ը ներառյալ։

ՀՖՖ Կարգապահական եւ էթիկայի կոմիտեի նիստը նախագահող՝

Դավիթ Բակլաչյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: